Հավելված N 1
ՀՀ կառավարության 2023 թվականի
դեկտեմբերի 28-ի N 2326-Ն որոշման

Ա Ռ Ա Ն Ձ Ն Ա Հ Ա Տ Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՐԱ ՍՏԵՂԾԱԾ ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ, ԱՌԱՆՁԻՆ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ, ՎԱՐԿԱՅԻՆ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ) ԴՐԱՄԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ (ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ) ՋԻՋՄԱՆ ԴԻՄԱՑ ՊԵՏԱԿԱՆ ԳԱՆՁԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԹՈՂԱՐԿՄԱՆ, ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ, ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ, ՀԵՏԳՆՄԱՆ, ՄԱՐՄԱՆ

1. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2022 թվականի հոկտեմբերի 13-ի «Հայաստանի Հանրապետության պետական գանձապետական երկարաժամկետ պարտատոմսեր թողարկելու մասին» թիվ 428-Ա հրամանի համաձայն թողարկված, AMGB1129A332 արժեթղթերի միջազգային տարբերակիչ ծածկագրով, 2033 թվականի հոկտեմբերի 29-ի մարման ամսաթվով, 9.60% արժեկտրոնային եկամտաբերությամբ, պետական գանձապետական երկարաժամկետ արժեկտրոնային պարտատոմսերի (այսուհետ՝ պարտատոմսեր) թողարկված ծավալից 217,861,881,000 դրամ անվանական արժեքով պարտատոմսերը տեղաբաշխվում են Լեռնային Ղարաբաղի կառավարության, նրա ստեղծած հիմնադրամների, ինչպես նաև սույն որոշման 2-րդ կետով սահմանված ընտրանքի չափանիշներին համապատասխան պարտավորություններով պարտատեր հանդիսացող ֆինանսական կազմակերպություններին սույն որոշման N 2 հավելվածով սահմանված կարգով դրամական պահանջների (գույքային իրավունքների) փոխանցման գործարքների կնքման օրվանից առավելագույնը 2 աշխատանքային օրվա ընթացքում՝ ըստ յուրաքանչյուր ֆինանսական կազմակերպության և հետևյալ համամասնությամբ.

Ֆինանսական կազմակերպություն	2023 թվականի դեկտեմբերի 29-ի դրությամբ զիջվող պահանջի առավելագույն ծավալ, ՀՀ դրամ	Պարտատոմսի անվանական արժեք, ՀՀ դրամ
«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ	3,032,477,436.6	2,122,734,000
«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ	12,944,351,789.9	9,061,046,000
«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ	9,694,677,831.4	6,786,274,000
«ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ	52,307,671,020.4	36,615,370,000
«ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ	4,668,430,992.7	3,267,902,000
«ԱՐԵԳԱԿ» ունիվերսալ վարկային կազմակերպություն ՓԲԸ	1,535,575,912.9	1,074,903,000
«Արմսվիսբանկ» ՓԲԸ	24,611,292,051.8	17,227,904,000
«Արդշինբանկ» ՓԲԸ	57,588,002,868.7	40,311,602,000
«Հայաստանի արտահանման ապահովագրական գործակալություն» ԱՓԲԸ	103,682,000.0	72,577,000
«ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ	63,977,347.8	44,784,000
«Արցախբանկ» ՓԲԸ	102,992,661,431.5	72,094,863,000
«ԲԼԵՍՍ» ունիվերսալ վարկային կազմակերպություն ՍՊԸ	566,277,943.4	396,395,000
«Բնակարան երիտասարդներին» վերաֆինանսավորում իրականացնող վարկային կազմակերպություն ՓԲԸ	24,735,174,000.0	17,314,622,000
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ	7,845,455,163.0	5,491,819,000
«ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ	262,760,000.0	183,932,000
«ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ» ՈՒՎԿ ՓԲԸ	234,480,671.2	164,136,000
«Յունիբանկ» ԲԲԸ	8,044,311,330.1	5,631,018,000
Ընդամենը	**311,231,259,791.4**	**217,861,881,000**

Սույն կետում ներկայացված զիջվող պահանջի առավելագույն ծավալը և պարտատոմսի անվանական արժեքը կարող են վերահաշվարկվել դրամական պահանջի (գույքային իրավունքի) փոխանցման գործարքի կնքման օրվա դրությամբ:

2. Պարտատոմսերի նկատմամբ սեփականության իրավունքների գրանցումներն իրականացվում են ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ՀՀ կենտրոնական բանկին տրամադրվող գրությամբ նշված տեղաբաշխման արդյունքներին

համապատասխան՝ նշելով ֆինանսական կազմակերպության անվանումը, արժեթղթերի տարբերակիչ ծածկագիրը, տեղաբաշխված պարտատոմսերի անվանական ընդհանուր ծավալը և արժեթղթերի դեպո հաշվի տեսակը (սեփական կամ ամփոփ ներդրողի), իսկ ոչ բանկ ֆինանսական կազմակերպությունների դեպքում՝ վերջիններիս սպասարկող բանկի անվանումը՝ ներկայացված պարտավորություններով որպես արժեթղթերի դեպո հաշվի տեսակ նշելով տվյալ բանկի ամփոփ ներդրողի:

3. Պարտատոմսերի տեղաբաշխման վերջնահաշվարկը կատարվում է ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2013 թվականի հունիսի 7-ի թիվ 142-Ն որոշմամբ սահմանված կարգով:

4. Պարտատոմսերի գների և արժեկտրոնների հաշվարկների, հետգնման, երկրորդային շուկայում պարտատոմսերի շրջանառության, պարտատոմսերի գրավադրման, պահառության գործունեության, պարտատոմսերի հաշվառման և հաշվարկների իրականացման համակարգի, պարտատոմսերի մարման, արժեկտրոնների վճարման հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի ապրիլի 13-ի «Հայաստանի Հանրապետության պետական գանձապետական կարճաժամկետ պարտատոմսերի, միջնաժամկետ և երկարաժամկետ արժեկտրոնային պարտատոմսերի թողարկման, տեղաբաշխման, հետգնման, շրջանառության և մարման կարգը, Հայաստանի Հանրապետության պետական գանձապետական խնայողական արժեկտրոնային պարտատոմսերի թողարկման, տեղաբաշխման, հետգնման և մարման կարգը, գանձապետական պահառուի գործունեության կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի դեկտեմբերի 27-ի N 1580-Ն, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հոկտեմբերի 19-ի N 1606-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 381-Ն որոշման N 1 հավելվածով սահմանված կանոնները:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

28.12.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ